ՍՈՒԱԿ ԱԳՌԱՒՈՒ

Նաև առակ մի այլ ասի
Վասն ագռաւու մի անմոռ
Որ էր քաղցեալ անպատմելի
Մինչ զի հաղիւ էր կենդանի։
Ելեալ գնայր 'ի միջոցէի
Տարաշրջէր վասն կերակրի.
Սակաւ պանրի նա պատահի
Որ էր անկեալ անդ 'ի յերկրի.
Ուրախութեամբ առեալ տանի
Ի բարձր ծառ մի նա բազմի,
Ջսակաւ պանիրն ճաշել կամի
Թերևս այնու առողջ մնասցի։
Այլ նենգաւոր աղուեսուկ մի
Խեղճ ագռաւուն հետամտի,
Գնացեալ ներքև ծառոյն կանգնի,
Ջնորա պանիրն առնու խորհի։
Սկսաւ գովել աղգի աղգի
Ջխեղճ ագռաւուկն ողորմելի՝
Թէ ուստի գայ այս գովելի
Թռչունս նման թագաւորի.
Փետուրք սորա փայլեալ լինի
Ջերդ զճառագայթ արեգակնի.
Թէ ձայն սորա քաղցր լինի՝
Ջսա թագաւոր ես կարգէի։
Իսկ ագռաւուկն ողորմելի
Հպարտանայ 'ի յիւր մտի,
Գովք աղուեսուն զխելքն տանի
Թողեալ զպանիրն դա՛ռ դա՛ռ հնչի։
Աղուէսն առեալ զպանիրն տանի
Ուրախութեամբ նա ճաշակի։
Ո՛վ ագռաւուկ ողորմելի,
Ջայնդ է աղէկ, խելքդ նուազի։

Մեկնութիւն առակիս.

Աղուէսն է նման սատանայի
Եւ թշնամւոյն նենգաւորի,
Որ միշտ ընդ մարդ պատերազմի,
Պէսպէս հնարիւք խաբել կամի.
Հպարտութեամբ զխելքն տանի,
Ջսէր աշխարհիս նմա ցուցանի.
Ջբարիսն ամէն զոր մարդ ունի
Կորուսանել ջանալ կամի.
Իսկ որ մտաքն զգաստ լինի
Ջառակս 'ի միտն առեալ պահի.
Մնասի իրաց ոչ հետևի,
Նա ստացող բարեաց լինի։

(Ի Նախնեաց)

digitised by A.R.A.R.@